Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

թարգմանիչ ներգրավելու մասին

« 12 » հուլիսի 2016թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ Ա.Ս.Վարդանյանս, քննարկելով վարույթիս թիվ 14135616 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2016 թվականի մայիսի 31-ին Օլգա Վլադիմիրի Կանովան ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ նույն օրը ժամը 10:00-ի սահմաններում Երևան քաղաքի Կոմիտաս 32 հասցեի դիմաց գտնվող կանգառում Արմեն Ժորժի Ղազարյանը անհիմն վիճաբանության մեջ է մտել իր և իր ամուսնու՝ Ալեքսանդր Գենադիի Կանովի հետ, որի ընթացքում իր հասցեին հնչեցրել է սպանության սպառնալիքներ, ապա ձեռքում եղած բանանով հարվածել է իր գլխին և թքել երեսին:

ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնում նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Արմեն Ժորժի Ղազարյանը տառապում է «Շիզոֆրենիա պարանոիդ ձև» հիվանդությամբ:

Նկատի ունենալով, որ Արմեն Ղազարյանը տառապում է «Շիզոֆրենիա պարանոիդ ձև» հիվանդությամբ և այդ պատճառով գտնվել է անօգնական վիճակում, հաշվի առնելով նաև, որ ՀՀ Վճռաբեկ դատարանը ՎԲ-73/08 նախադեպային որոշմամբ արձանագրել է, որ այն իրավիճակում, երբ անձը, ում իրավունքները խախտվել են, իր անօգնական վիճակի կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը, քրեական գործ հարուցելու առիթն օրինական, իսկ հիմքերը բավարար լինելու դեպքում քրեական գործ հարուցելու մասին որոշումը պետք է կայացվի հանրային մեղադրանքի գործերի հարուցման համար սահմանված ընդհանուր կարգով: Բացի այդ Արմեն Ղազարյանը չի ընդունել իր կողմից Օլգա Վլադիմիրի Կանովայի հասցեին սպանությա սպառնալիք հնչեցնելու հանգամանքը, ուստի համաձայն ՀՀ Վճռաբեկ դատարանի 24.03.2014թ. ՇԴ/0012/11/13 գործով նախադեպային որոշման դիմողի բողոքի բացակայության պայմաններում ենթադրելի հանցանք կատարած անձը՝ տվյալ դեպքում Արմեն Ղազարյանը առարկել է իր կողմից հանցանք կատարելու հանգամանքը, ապա նման պայմաններում գործի քննությունը կատարվում է ընդհանուր կարգով:

Փաստի առթիվ 15.06.2016թ. ՀՀ քննչական կոմիտեի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 14135616 քրեական գործը՝:

17.06.2016թ. քրեական գործը ընդունվել է վարույթ:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել հարցաքննել Օլգա Վլադիմիրի Կանովային և Ալեքսանդր Գենադիի Կանովին, ովքեր գրավոր և բանավոր կերպով տիրապետում են միայն ռուսերեն լեզվին:

Նկատի ունենալով, որ Օլգա Վլադիմիրի Կանովայի և Ալեքսանդր Գենադիի Կանովի հետ անհրաժեշտ քննչական գործողություններ կատարելու համար

անհրաժեշտ է ներգրավվել ռուսերեն և հայերեն լեզուներին ազատորեն տիրապետող թարգմանիչ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 14135616 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել Վարդուհի Ավետիսի Շահինյանին / «Ֆինլոու» ՍՊԸ տնօրեն, թարգմանչուհի, բարձրագույն կրթությամբ, հաշվառված ք. Երևան, Բաղրամյան 62 շենք բնակարան 48, անձնագիր՝ AH0512851/, ով հավասարապես տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին:

2. Թարգման Վ.Շահինյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝ Ա.Ս.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշմանը ծանոթացա, իրավունքներս ու պարտականություններս բացատրված են, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝ Վ.Շահինյան

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝ Ա.Ս.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշում
Թարգմանիչ հրավիրելու մասին

12 հուլիսի 2016թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Կ.Գրիգորյանս, վերանալելով վարույթումս քննվող թիվ 17134509/1 քրեական գործի նյութերը.

Պարզեցի

Գուրգեն Արթուրի Բաղդասարյանը ուրիշի գույքի հափշտակության նպատակով նախնական համաձայնության գալով Հովհաննես Գագիկի Գրիգորյանի և Յուրի Էռնեստի Հարությունովի հետ , 2009թ. նոյեմբերի 18-ին՝ ժամը 11:45-ին , Յ.Հարությունովի անձնական օգտագործման ''Ֆոլցվագեն պասատ'' մակնիշի 11LL940 պետհամարանիշի ավտոմեքենայով ուղևորվել են ''Սուրբ Գրիգոր Լուսավորիչ'' բժշկական կենտրոն, որտեղ Յ.Հարությունովը առաջին հարկում գործող Արմենթել Քարտֆոնից 010669515 հեռախոսահամարից զանգահարելով 010633312 հեռախոսահամարին ռուսերեն լեզվով հեռախոսազրույց է ունեցել տուժող Ն. Ադոնցի հետ և տեղեկանալով , որ վերջինիս հայրը՝ Ա.Ադոնցը, բացակայում է բնակարանից նույն օրը ժամը 12:00-ի սահմաններում , Հովհաննես Գրիգորյանի հետ Յ.Հարությունովի ուղեկցությամբ վերջինիս ''Ֆոլցվագեն պասատ'' մակնիշի ավտոմեքենայով ուղևորվել են Նորքի 1-ին զանգվածի Նանսենի փողոցի 5/3 շենքի բակ, որտեղ դիմակավորված Հ.Գրիգորյանի հետ՝ արտերկրից ուղարկված ծանրոցը փոխանցելու պատրվակով , խաբեությամբ ապօրինի մուտք են գործել Ադոնցների՝ Նոր Նորքի 1-ին զանգվածի նանսենի փողոցի 5/3 շենքի 21 բնակարան և Նոռա Աշոտի Ադոնցի կյանքի և առողջության համար վտանգավոր բռնության, այն է՝ նախապես իրենց հետ վերցրած որպես զենք օգտագործված առարկայի գործադրման սպառնալիքով ավազակային հարձակում են գործել վերջինիս նկատմամբ , որի ընթացքում կպչուն ժապավենով կապել են Ն.Ադոնցի ձեռքերը , բերանը և բնակարանից հափշտակել 387.410 ՀՀ դրամին համարժեք 1000 Ամն դոլար կանխիկ գումար, 1.610.500 դրամ ընդհանուր արժողության ոսկյա զարդեր՝ պատճառելով խոշոր չափի ընդհանուր 1.997.910 ՀՀ դրամ գույքային վնաս:

Փաստի առթիվ 18.11.2010թ. Նոր Նորք քննչական բաժնում ՀՀ քր. օր.-ի 175 հոդ. 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով հարուցվել է թիվ 17134509 քրեական գործը:

21.12.2009թ. որոշում է կայացվել Գուրգեն Արթուրի Բաղդասարյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին ՀՀ քր. օր.-ի 175 հոդ. 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով նախատեսված հանցագործության կատարման համար, նույն օրը վերջինիս նկատմամբ հայտարարվել է հետախուզում, խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

23.02.2010թ.-ին որոշում է կայացվել թիվ 17134509 քրեական գործից Գուրգեն Արթուրի Բաղդասարյանի կողմից՝ ՀՀ քր. օր.-ի 175 հոդ. 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ,

4-րդ կետերով նախատեսված հանրորեն վտանգավոր արարք կատարելու վերաբերյալ վարույթի մասը անջատելու մասին, անջատված վարույթին շնորհվել է 17134509/1 համարը:

Թիվ 17134509/1 քրեական գործի նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել հայերեն լեզվից ֆրանսերեն լեզվով թարգմանություն կատարելու:

Նկատի ունենալով, որ ''Ֆինլոու'' ՍՊԸ-ի թարգմանիչ Վարդուհի Վարդգեսի Հայրապետյանը /ծնված 12.11.1947թ., անձն. AM0308630/ ազատորեն տիրապետում է հայերեն և ֆրանսերեն լեզուներին, ունի բարձրագույն կրթություն, շահագրգռված չէ գործի ելքով, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով

Որոշեցի

Թիվ 17134509/1 քրեական գործով ''Ֆինլոու'' ՍՊԸ-ի թարգմանիչ Վարդուհի Հայրապետյանին ճանաչել թարգմանիչ՝ նրան պարզաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ Կ.Գրիգորյան

Ծանոթացա որոշմանը, ինձ պարզաբանվել են
Իմ իրավունքները և պարտականությունները:

Թարգմանիչ Վարդուհի Հայրապետյան